ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետև՝ Խորհուրդ)**, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Դավիթ Մելքոնյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի և Մարինե Ֆարմանյանի,

Քննության առնելով փաստաբան Վարուժան Պարսամի Ավետիսյանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմք հանդիսացող հանգամանքները,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև՝ Պալատ)** աշխատակազմի ղեկավարի փաստաբան Վարուժան Պարսամի Ավետիսյանի նկատմամբ առկա օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի վերաբերյալ զեկուցագիրը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.02.2021թ. թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով եզրափակիչ մասում նշվել է՝

«Վարուժան Պարսամի Ավետիսյանին մեղավոր ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի՝ 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 238-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով Վարուժան Պարսամի Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 /երեք/ տարի ժամկետով, 218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 8 /ութ/ տարի ժամկետով, 238-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկում՝ 8 /ութ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով, հանցանքների համակցությամբ՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով՝ Վարուժան Պարսամի Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 9 /ինը/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ Քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նշանակված պատժում հաշվակցել Վարուժան Պարսամի Ավետիսյանի՝ նախաքննության և դատական քննության ընթացքում կալանքի տակ գտնվելու 2 /երկու/ տարի 1 /մեկ/ ամիս 15 /տասնհինգ/ օր ժամկետը և վերջնական պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 7 /յոթ/ տարի 4 /չորս/ ամիս 15 /տասնհինգ/ օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վարուժան Պարսամի Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված անձնական երաշխավորությունը թողնել անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դրանից հետո՝ օրինական հիմքերի առկայության պայմաններում, Վահրամ Ռոբերտի Պետրոսյանի կողմից «Յունիբանկ» ԲԲԸ-ում 2018թ-ի օգոստոսի 17-ին վճարված ընդհանուրը՝ 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարը վերադարձնել վերջինիս կամ նրա կողմից լիազորված անձանց:

Վարուժան Պարսամի Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժի կրման սկիզբը հաշվել նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից:»

Վարուժան Պարսամի Ավետիսյանը հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր՝ 1339):

Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 26.05.2022թ.

Ուստի առկա է այն փաստը, որ փաստաբան Վարուժան Ավետիսյանը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առկա է փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-կետով նախատեսված հանգամանքը, այն է՝ *անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:*

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝ *առկա է նույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը.:*

ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Դատվածությունը մարվում է՝*

1) սույն օրենսգրքի 84-րդ, 85-րդ, 88-րդ, 89-րդ հոդվածներով սահմանված պատժից ազատվելու, ինչպես նաև 86-րդ հոդվածով սահմանված կարգով պատժի կատարումը հետաձգելու դեպքերում՝ փորձաշրջանն ավարտվելուց հետո:»:

Նկատի ունենալով, որ փաստաբան Վարուժան Պարսամի Ավետիսյանն ունի դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատվածություն, նրա դատվածությունը հանված կամ մարված չէ, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, ըստ որի՝ *արտոնագրի գործողությունը*

դադարեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ այն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում կայացնելու միջոցով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Դադարեցնել փաստաբան Վարուժան Պարսամի Ավետիսյանի փաստաբանական գործունեության թիվ 1339 արտոնագրի գործողությունը՝ այն ճանաչելով ուժը կորցրած:

2. Վարուժան Պարսամի Ավետիսյանին հանել փաստաբանների ցուցակից:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման օրինակն ուղարկել Վարուժան Ավետիսյանին, ինչպես նաև հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է մեկամսյա ժամկետում բողոքարկվել դատական կարգով:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհուրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

17 հունիսի 2025թ.
թիվ 11/17-Ա
ք.Երևան